



5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌՇՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 12/22

30.07.2022թ.

ք. Երևան

ՀՀ ԱԺ պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 42-րդ, 51-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածներին:

Դիմողը առաջ է քաշել հետևյալ հարցադրումները.

1) Արդյո՞ք Հանրապետության նախագահի, վարչապետի, ԱԺ նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները հանդիսանում են սահմանափակման ենթակա տեղեկատվություն, և արդյո՞ք նման տեղեկատվության սահմանափակումը համապատասխանում է համաչափության սկզբունքին:

2) Արդյո՞ք Հանրապետության նախագահի, վարչապետի, ԱԺ նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները հանրությունից գաղտնի պահելը չի խախտում տեղեկատվության ազատության և հասանելիության Սահմանադրի կամքը:

Ըստ Դիմողի՝ Օրենսդիրը, պարզ չէ՝ ինչ իրավաչափ նպատակ հետապնդելով, վիճարկվող նորմի միջոցով ուղղակիորեն սահմանափակել է Հանրապետության

նախագահի, վարչապետի, ԱԺ նախագահի՝ պետական միջոցների հաշվին իրականացվող ծախսերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը: Ակնհայտ է, որ նման սահմանափակումը որևէ կերպ չի վերաբերում որևէ մեկի հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Անդրադառնալով հանրային շահի պաշտպանությանը՝ հարց է առաջանում՝ ի՞նչ առնչություն ունի հիշյալ պաշտոնատար անձանց պետական միջոցների, հարկ վճարողների տրամադրած գումարները, օրինակ՝ արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային միջոցների սպասարկման համար կատարված ծախսերը գաղտնի պահելը որևէ հանրային շահի պաշտպանության հետ: Ակնհայտ է, որ այս հիմքը ևս կիրառելի չէ: Ավելին, հենց հանրային շահերի պաշտպանությունից է բխում նշված տեղեկատվության հասանելիությունը, դրա նկատմամբ հանրային վերահսկողության և հաշվետվողականության կառուցակարգերի ապահովումը: Նման պնդումը բխում է հենց Սահմանադրության 1-ին հոդվածի «ժողովրդավարական պետություն» սկզբունքից:

Ըստ Դիմողի՝ Սահմանադրության 78-րդ հոդվածով երաշխավորված համաչափության սկզբունքի տեսանկյունից որևէ կերպ բավարարված չեն վիճարկվող դրույթների պիտանիությունը, անհրաժեշտությունը և առավել ևս համարժեքությունը՝ Հանրապետության նախագահի, վարչապետի, ԱԺ նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները հանրությունից առհասարակ գաղտնի պահելը:

Նման տեղեկատվությունը գաղտնի պահելը խախտում է տեղեկատվության ազատության և հասանելիության վերաբերյալ Սահմանադրի կամքը և չի բխում պետության պոզիտիվ պարտականությունից:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 42-րդ, 51-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածներին:

Վիճարկվող նորմի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

2. Պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում ներառվում են ազգային անվտանգության ապահովման, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, կապի ծառայությունների, անվտանգության սարքերի և սարքավորումների, ներառյալ դրանց սպասարկման, ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմավթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները:

Սահմանադրության 1-ին հոդված համաձայն՝

Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

2. Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:

2. Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 80-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

Այսպես, Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում ներառված են «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, ներառյալ դրանց սպասարկման, ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները:

«Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Պետական պահպանություն տրամադրվում է՝

1) Հանրապետության նախագահին.

2) վարչապետին.

3) Ազգային ժողովի նախագահին.

4) սույն օրենքի 6.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում՝ վարչապետի թեկնածուին:

Հանրապետության նախագահը, վարչապետը և Ազգային ժողովի նախագահը՝ իրենց պաշտոնավարման ժամանակահատվածում, իսկ վարչապետի թեկնածուն՝ մինչև վարչապետ նշանակելու հարցի լուծումը, իրավասու չեն հրաժարվելու պետական պահպանությունից:

Այսինքն՝ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում ներառված են Հանրապետության նախագահի, վարչապետի և ԱԺ նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, ներառյալ դրանց սպասարկման, ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է «պետական գաղտնիք» եզրույթի հասկացությունը, համաձայն որի՝ պետական գաղտնիքը Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Այսինքն՝ որպեսզի տեղեկությունը պետական գաղտնիք համարվի, պետք է.

1. վերաբերի հետևյալ բնագավառներին՝ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության

2. դրա տարածումը ծանր հետևանքներ առաջացնի Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Վերոգրյալի վերլուծությունից պարզ է դառնում, որ Հանրապետության նախագահի, վարչապետի և ԱԺ նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների

տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, ներառյալ դրանց սպասարկման, ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառներին չեն վերաբերում, ավելին, հարց է առաջանում՝ ինչպե՞ս կարող է դրանց վերաբերյալ տեղեկատվության տարածումը ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Մյուս կողմից, Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:

Նույն հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ անձի՝ տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել: Դրանք են՝

1. հանրային շահերի պաշտպանությունը կամ
2. այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Ակնհայտ է, որ Հանրապետության նախագահի, վարչապետի և ԱԺ նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, ներառյալ դրանց սպասարկման, ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկության սահմանափակումը չի կարող հետապնդել այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակ:

Ինչ վերաբերում է հանրային շահին, տվյալ դեպքում ևս հնարավոր չէ մեկնաբանել, թե օրինակ Հանրապետության նախագահի, վարչապետի և ԱԺ նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման հետ կապված ծախսերի վերաբերյալ տեղեկության գաղտնիությունը ո՞ր հանրային շահի պաշտպանությանն է միտված: Ընդհակառակը, Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով ժողովրդավարական պետություն, հանրության առջև պարտավորություն է կրում հաշվետու լինել վերջիններիս կողմից վճարված հարկերի հաշվին կատարված ծախսերի համար:

Ավելին, Սահմանադրության 51-րդ հոդվածով երաշխավորված տեղեկություններ ստանալու իրավունքը ներառված է Սահմանադրության 2-րդ գլխում և համարվում է սահմանադրորեն երաշխավորված հիմնական իրավունք: Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից տեղեկատվություն ստանալու՝ անձի իրավունքին՝ Սահմանադրական դատարանը 2016 թվականի փետրվարի 23-ի ՍԴՈ-1256 որոշման մեջ արձանագրել է. «7. Ամփոփելով վերոհիշյալ պահանջները և համադրելով վեճի առարկա օրենքի իրավակարգավորումների հետ՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնատար անձանցից տեղեկություններ ստանալու իրավունքը պետության համար ստեղծում է պոզիտիվ պարտականություններ ապահովելու համապատասխան իրավունքի պատշաճ և արդյունավետ իրականացումը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է իրականացվել տարբեր եղանակներով:

Մասնավորապես՝ կախված տեղեկության բովանդակությունից և նշանակությունից, այն կարող է հասու լինել կամ որպես պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվություն, կամ որպես օրենքով նախատեսված կարգով տրամադրվող տեղեկություն:»:

Անդրադառնալով համաչափության սկզբունքին՝ 2007 թվականի փետրվարի 7-ի ՍԴՈ-677 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «...Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ

սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:

Անդրադառնալով նաև անձի իրավունքների սահմանափակման համաչափությանը՝ 2015 թվականի դեկտեմբերի 8-ի ՄԴՈ-1244 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշում է. «... Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին»:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով Սահմանադրության 80-րդ հոդվածը, համաձայն որի՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է, հանգում ենք այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետությունը, իրեն հռչակելով իրավական պետություն և սահմանադրորեն ամրագրելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնատար անձանցից տեղեկություններ ստանալու իրավունքը, պետության համար ստեղծում է պոզիտիվ պարտականություններ ապահովելու համապատասխան իրավունքի պատշաճ և արդյունավետ իրականացումը, իսկ տվյալ իրավունքի սահմանափակումը պետք է բխի ինչպես սահմանադրական նպատակներից, այնպես էլ լինի պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ դրանց հասնելու համար:

Սույն դեպքում, նախ հնարավոր չէ կապ գտնել պետական գաղտնիք պարունակող տեղեկության և Հանրապետության նախագահի, վարչապետի և ԱԾ նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկության միջև, մյուս կողմից, պարզ չէ, թե ինչ սահմանադրական նպատակ է հետապնդում նման տեղեկության սահմանափակումը, ինչ հանրային շահի կամ ում իրավունքների և ազատությունների պաշտպանությանն է ուղղված: Նման կարգավորումը չի բխում իրավական պետության նպատակներից:

Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն

իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Այսինքն՝ Հանրապետության նախագահը, վարչապետը և ԱԺ նախագահը հանդիսանում են ժողովրդի կողմից իր իշխանության իրականացման մարմիններ, որոնց նկատմամբ ժողովուրդը պետք է օժտված լինի վերահսկողության համապատասխան մեխանիզմներով, առավել ևս իր կողմից վճարված հարկերի գումարների ծախսերի մասով՝ բացառությամբ, բնականաբար, պետական գաղտնիք պարունակող տեղեկատվության, որը սակայն ոչ մի աղերս չունի Հանրապետության նախագահի, վարչապետի և ԱԺ նախագահի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկության հետ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 42-րդ, 51-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածներին խնդրահարույց է:

Համակարգող՝

X

Լյուդվիկ Դավթյան